3 Սառույցի պաշարներ՝ Լուսնի վրա

5 Հրդեհներ թատրոններում եւ...



6 Արտակարգ բժիշկը

7 Հիշողություն

ISSN 1829-149X

ով իրազեկված է, նա զգաստացված է

արտակարգ թերթ

N 8 (329) 12.3.2010 - 18.3.2010 www.emergency.am

ՆԱՏՕ-ի խոշորագույն ուսումնավարժությունը Հայաստանում

Մարտի 16-18-ը Երեւանում տեղի կունենա «Արմենիա 2010» վարժանքի գլխավոր պլանավորման կոնֆերանս՝ Հայաստան-ՆԱՏՕ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում: Կոնֆերանսի ընթացքում վերջնականորեն կիստակեցվեն կազմակերպչական եւ անցկացման հետ կապված բոլոր այլ հարցերը:

Այս տարվա սեպտեմբերի 11-ից 17-ը Կոտայքի մարզում՝ Արզնիի մոտ, անցկացվելու է «Արմենիա 2010» միջազգային՝ արտակարգ իրավիճակների հետեւանքների վերացման դաշտային վարժանքը: Դրան կմասնակցեն ներկայացուցիչներ եւ փրկարարական թիմեր ՆԱՏՕ-ի անդամ եւ գործընկեր երկրներից, միջազգային ու հասարակական կազմակերպություններից: Ակնկալվում է 1000-ից ավելի մասնագետների մասնակցություն:

Ընտրված է երկրաշարժի սցենար, որի հետեւանքները պետք է լինեն քիմիական վթարը, ջրամբարի պատվարի փլուզումը, ջրամատակարարման եւ գազամատակարարման վթարները: Իրականացվելու է բարձրահարկ շենքերում տուժածների որոնում, բարձր հարկերից տարահանում, ծխապատ գոտիներից տուժածների որոնում եւ տարահանում, ինչպես նաեւ փլատակներում հայտնված մարդկանց որոնում՝ շների ու հատուկ սարքերի օգնությամբ: Ժայռերում աշխատանքները նախատեսվել են որպես մասնավոր իրավիճակ՝ տուժած լեռնագնացների որոնում եւ տարահանում: Հաջորդը հանքախորշի տեղամասն է, որտեղ նախատեսված են հանքախորշի փլուզումներ, որտեղ էլ փրկարարները կիրականացնեն որոնում եւ տարահանում:

ՀՀ ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայությունը սկսել է մասնակցել այդ վարժանքներին 2003 թվականից: Այդ տարի վարժանքը կայացավ Ռումինիայում, այնուհետեւ՝ Իտալիայում, Խորվաթիայում, Ֆինլանդիայում, իսկ 2009 թ.՝ Ղազախստանում:

Դաշտային վարժանքի հյուրընկալումը տվյալ երկրում համարվում է երկրի ներդրումը ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրում:

«Արտակարգ ալիք» հեռուստահաղորդում

☞ Մեր փրկարարների առօրյայից. ամենադժվար պահին նրանք միշտ ձեր կողքին են:

☞ Ինչու՞ Չիլիի աշխարհացունց երկրաշարժը համեմատաբար քիչ զոհեր խլեց: Ի՞նչ է կատարվում աշխարհում. մեր սեյսմոլոգների մեկնաբանությունը:

☞ Արտակարգ իրավիճակների նախարարության տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնն ու տեխնածին վթարների կանխարգելումը:

☞ Առաջին օգնության հանրագիտարան՝ վիրակապեր:

Այս եւ այլ ուշագրավ թեմաների մասին՝ ուրբաթ, մարտի 12-ին, 23:10-ին՝ Շանթի եթերում: Կրկնությունը՝ շաբաթ, 9:10-ին եւ կիրակի, 12:20-ին:

«Էլիտ գրուպ». կյանքի նոր որակ

Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Հակասեյսմիկ համակարգերի միջազգային ասոցիացիայի անդամ «Էլիտ Գրուպ» ընկերությունը տարածաշրջանի առաջատարն է սեյսմակայուն շինարարության ոլորտում:

Առաջին անգամ Հայաստանում «Էլիտ Գրուպի» շենքերում սկսեցին կիրառել ռետինամետաղյա շերտավոր բարձիկներ, որոնցով երկնաքերներ են կառուցում Ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում եւ այլուր:

«Էլիտ Գրուպը» միակ ընկերությունն է Հայաստանում, որն արժանացել է միջազգային հեղինակավոր վկայականների՝ կառավարման, աշխատանքի պաշտպանության եւ անվտանգության ոլորտներում:

«Էլիտ Գրուպ»՝ բնակելի, առեւտրային, առողջարանային ու հյուրանոցային համալիրներ, ամբողջական թաղամասեր, տարածաշրջանային ծրագրեր, տեղական ու միջազգային հեղինակավոր ու հուսալի գործընկերներ:

Ճիշտ կառավարումը գիտություն է, իսկ «Էլիտ Գրուպը» կառավարվում է գիտնականների կողմից:

Երեւան, Պուշկինի 21, ✆ 56-69-22, 56-69-33:

քրոնիկոն

Հայաստանի փրկարար ծառայություն զանգահարեք

1-01, 1-12

Փլուզումներ

Մարտի 4-ին Լոռու մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 16.20-ի սահմաններում փլուզվել է Սարամեջ գյուղի բնակիչ Ս. Մինասյանին պատկանող տան պատը, եւ հարեւան տնակին վտանգ է սպառնում:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական վարչության ղեկավար կազմը:

Պարզվել է, որ ինքնափլուզվել է դեռեւս 1988 թ. երկրաշարժից խարխլված ոչ բնակելի տնակի մի պատը: Պատից պոկված քարերն ընկել են Կ. Թադեւոսյանին պատկանող հարակից բնակելի տնակի վրա, որը, բարեբախտաբար, չի վնասվել: Քարերի մնացած մասը դիպել է փողոցով անցնող գազատար խողովակին եւ վնասել այն:

Դեպքի վայր մեկնած «1-04» ծառայության աշխատակիցները դադարեցրել են գազամատակարարումը՝ մինչեւ փլուզման վտանգի վերացումը:

Զոհեր եւ վիրավորներ չկան:

***

Նույն օրը Վայոց ձորի մարզից ստացված նմանատիպ տեղեկության համաձայն՝ մարտի 2-ի երեկոյան փլուզվել է Շատին գյուղի բնակիչ Ա. Աբգարյանին պատկանող տան պատը:

Տեղում պարզվել է, որ տունն ունի վթարային կարգավիճակ եւ գտնվում է քարաթափման գոտում: Զոհեր եւ վիրավորներ չկան:

Դեպքի մասին տեղյակ է պահվել մարզպետարանի քաղաքաշինության բաժինը:

***

Մարտի 9-ին, ժամը 19.20-ին Սյունիքի մարզից ստացված տեղեկության համաձայն՝ Երեւան-Կապան ավտոճանապարհի 254-րդ կիլոմետրում տեղի է ունեցել ճանապարհի փլուզում, եւ անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Պարզվել է, որ փլուզվել եւ անանցանելի է դարձել ճանապարհի՝ 37 մ երկարությամբ, 8 մ լայնությամբ եւ 2,5 մ խորությամբ հատվածը:

Գորիսի «Ճանշինի» աշխատակիցների կողմից իրականացված միջոցառումների արդյունքում ժամը 21.30-ի դրությամբ ճանապարհի նշյալ հատվածով ապահովվել է միակողմանի երթեւեկություն:

Քարաթափումներ

Մարտի 5-ին, ժամը 11.30-ին Տավուշի մարզպետարանից ստացված տեղեկության համաձայն՝ Հաղարծին գյուղից դեպի Հաղարծնի վանահամալիր տանող ավտոճանապարհի 4-րդ կիլոմետրում տեղի է ունեցել քարաթափում, ինչի հետեւանքով ճանապարհը գրեթե ամբողջությամբ փակվել է, եւ վնասվել է Թեղուտ գյուղի խմելու ջրագիծը:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական վարչության օպերատիվ խումբը:

Մարզպետարանի եւ «Ճանշինի» աշխատակիցների կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում ավտոճանապարհի ազատ հատվածով ապահովվել է միակողմանի երթեւեկություն:

***

Նույն օրը Արագածոտնի մարզի Աղձք գյուղից ստացված տեղեկության համաձայն՝ գիշերվա ընթացքում գյուղից դեպի Ամբերդ տանող ավտոճանապարհին տեղի է ունեցել քարաթափում՝ 70-100 մ երկայնքով, ինչի հետեւանքով վնասվել են գյուղի խմելու ջրագիծը եւ Ամբերդ գետից Արզնի-Շամիրամ ջրանցքը սնուցող 1000-1500 մմ տրամագծով ջրագիծը: Դեպքի վայր է մեկնել Արագածոտնի մարզային փրկարարական վարչության օպերատիվ խումբը:

Դեպքի մասին տեղյակ է պահվել Արագածոտնի մարզպետարանը:

Թունավորում շմոլ գազից

Մարտի 5-ին Լոռու մարզից տեղեկություն է ստացվել, որ ժամը 21.00-ին շմոլ գազից թունավորումով Ստեփանավանի հիվանդանոց է տեղափոխվել Գյուլագարակ գյուղի բնակչուհի, 1992 թ. ծնված Թամարա Մարտիրոսյանը:

Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը գնահատվում է բավարար:

Վնասներ ուժեղ քամուց

Գեղարքունիքի մարզից տեղեկություն է ստացվել, որ մարտի 8-ի լույս 9-ի գիշերը գրանցված ուժեղ քամու հետեւանքով վնասվել են Աստղաձոր գյուղի բնակիչներ Ս.Դավեյանին եւ Բ. Պետրոսյանին պատկանող տների ձեղնահարկերը, համապատասխանաբար՝ 287,5 եւ 70 քմ մակերեսներով, շրջվել է 4 էլեկտրասյուն, ինչի հետեւանքով գյուղի մի մասը հոսանքազրկվել է:

Մարտի 9-ի ժամը 10.00-ի դրությամբ գյուղի հոսանքամատակարարումը վերականգնվել է: Վնասի չափը ճշտելու նպատակով գյուղապետարանում ստեղծվել է հանձնաժողով:

***

Սյունիքի մարզից տեղեկություն է ստացվել, որ մարտի 9-ին գրանցված ուժեղ քամու հետեւանքով վնասվել են Քաջարան քաղաքի թիվ 2 միջնակարգ դպրոցի, Տերյան փողոցի 4-րդ շենքի, ինչպես նաեւ արվեստի դպրոցի տանիքները՝ մոտ 1300 քմ ընդհանուր մակերեսով:

Վնասի չափը ճշտելու նպատակով ստեղծվել է հանձնաժողով:

Սելավը փակել է ճանապարհը

Մարտի 9-ին, ժամը 16.40-ին Գեղարքունիքի մարզից տեղեկություն է ստացվել, որ ձնհալի հետեւանքով առաջացած սելավաջրերը ծածկել են Գեղնովիտ գյուղի տնամերձ հողամասերը՝ մոտ 5 հա մակերեսով՝ անանցանելի դարձնելով Մարտունի-Գետափ ավտոճանապարհի մոտ 300 մ երկարությամբ հատվածը: Գավառի «Ճանշինի» աշխատակիցների կողմից իրականացված մաքրման աշխատանքների արդյունքում ժամը 17.30-ի դրությամբ նշյալ ճանապարհով երթեւեկությունը վերականգնվել է:

Ջուրը հեղեղել է գյուղը

Մարտի 10-ին, ժամը 15.00-ին Կոտայքի մարզից տեղեկություն է ստացվել, որ ձնհալի հետեւանքով հեղեղվել է Սոլակ գյուղի կենտրոնական թաղամասը:

Իրավիճակին ծանոթանալու նպատակով դեպքի վայր են մեկնել Կոտայքի մարզային փրկարարական վարչության մասնագետները: Տեղում պարզվել է, որ հեղեղի հետեւանքով զգալիորեն վնասվել են գյուղի՝ մոտ 1 կմ երկարությամբ կենտրոնական փողոցը եւ 6 բնակելի տներ:

Վնասի չափը ճշտվում է:

Շաբաթվա ընթացքում հանրապետության տարածքում արձանագրվել է տարաբնույթ հրդեհների 18 դեպք:

Հրդեհ տնակում

Մարտի 6-ին, ժամը 21.01-ին Մարալիկ քաղաքի ոստիկանությունից ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Շիրակի մարզի Ձիթհանքով գյուղում:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 21.35-ին, մարվել՝ 22.55-ին:

Այրվել է 18 քմ մակերեսով տնակ, որի ներսում հայտնաբերվել է տանտիրուհու՝ 1936 թ. ծնված Քնարիկ Գինոսյանի դին:

***

Մարտի 6-ին, ժամը 22.35-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Տավուշի մարզում՝ Դիլիջան-Իջեւան ավտոճանապարհի 15-րդ կմ-ին հարակից տարածքում:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մեկուսացվել է ժամը 23.20-ին, մարվել՝ 00.10-ին:

Այրվել են Հաղարծին գյուղի բնակիչ Ա. Ստեփանյանին պատկանող՝ 36 քմ մակերեսով տնակը եւ 100 քմ խոտածածկույթ:

Հրդեհ տանիքում

Մարտի 8-ին, ժամը 14.39-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի Ռաֆֆու 70 հասցեում: Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 15.15-ին, մարվել՝ ժամը 15.45-ին:

Այրվել են Ա. Մնացականյանին պատկանող տան տանիքի փայտյա կառուցատարրերը՝ 6 քմ մակերեսով:

Գոհար Բաղդասարյան

միջազգային լուրեր

Իտալիայում ձնաբուք է

Ուժեղ ձնաբուքը ծածկել է Իտալիայի մեծ մասը, որոշ շրջաններում դժվարացել է գնացքների եւ ավտոմեքենաների երթեւեկությունը:

Կալաբրիա շրջանի հարավում մեկ գիշերվա ընթացքում 40 սմ ձյուն է տեղացել, ինչը տարօրինակ է այդ շրջանի համար:

Օդերեւութաբանները կանխատեսում են եղանակի վատթարացում: Երկրի հյուսիսում եւ կենտրոնում սպասվում է նոր ուժեղ ձնաբուք, իսկ հարավում՝ անձրեւ: Ազգաբնակչությունն արդեն տեղեկացված է եղանակի վատթարացման մասին:

Անցյալ շաբաթ ուժեղ ձնաբուք

էր գրանցվել Ֆրանսիայի հարավային եւ Իսպանիայի հյուսիսային շրջաններում:

Չինաստանում երաշտ է

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հարավ-արեւմուտքում շարունակվում է դեռ անցյալ տարվա հուլիսին սկսված երաշտը:

Ըստ մասնագետների՝ վերջին 100 տարվա ընթացքում գրանցված այս ամենաուժեղ երաշտը կշարունակվի մինչեւ մայիս:

Երաշտից ամենաշատը տուժել է Յուննան գավառը, որտեղ առանց խմելու ջրի մնացել է մոտ 7,5 միլիոն մարդ:

Չորացած անտառները բռնկվում են նույնիսկ ամենափոքր կայծից: Վերջին շրջանում գրանցվել է ավելի քան 80 անտառային հրդեհ:

Վրաստանում ջրհեղեղ է

Վրաստանի մի քանի շրջաններում ջրհեղեղի հետեւանքով փլուզվել են ճանապարհներ, տները ծածկվել են ջրով, սատկել են բազմաթիվ անասուններ:

Ռուսական լրատվամիջոցների հաղորդմամբ՝ ջրային տարերքից ամենաշատը տուժել են Ցագերիի եւ Վանի շրջանները: Վանի շրջանի բնակավայրերից մարդկանց ստիպված են եղել տարահանել ուղղաթիռներով:

Երկրաշարժ Թուրքիայում

Երկուշաբթի օրը 5,9 մագնիտուդ ուժգնությամբ ստորգետնյա ցնցումներ են գրանցվել Թուրքիայի արեւելքում: Վերջին տվյալներով՝ զոհվել է 57 մարդ, մոտ 100-ը ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

Երկրաշարժի էպիկենտրոնում՝ էլյազիգ շրջանում, որը գտնվում է մայրաքաղաք Անկարայից 550 կմ հեռավորության վրա, ավերվել են տասնյակ տներ: Երկրաշարժից մի քանի ժամ հետո գրանցվել են նոր ցնցումներ, այս անգամ՝ 5,5 մագնիտուդ ուժգնությամբ: Իրականացվում են որոնողափրկարարական աշխատանքներ:

Բեռնատարը հարվածել է ամբոխին

Մարտի 9-ին Նիգերիայի կենտրոնում ցեմենտով բեռնատարը ճանապարհամերձ շուկայում մխրճվել է ամբոխի մեջ: Տեղի ոստիկանության տվյալներով՝ պատահարի հետեւանքով զոհվել է 30-ից 50 մարդ: Տասնյակ տուժածներ տեղափոխվել են հիվանդանոց:

Ըստ նախնական վարկածի՝ վարորդը անհայտ պատճառներով կորցրել է մեքենայի կառավարումը:

Դեպքի վայրի մոտակայքում գտնվում է տեղի ցեմենտի գործարանը, եւ ճանապարհով անընդհատ երթեւեկում են ցեմենտով բեռնված մեքենաներ: Այս ճանապարհին նման պատահարներ հաճախ են լինում: Անցյալ տարվա դեկտեմբերին համանման վթարի զոհ էր դարձել մոտ 100 մարդ:

Պայթյուն գործարանում

Մարտի 11-ին ուժգին պայթյուն է որոտացել Ռուսաստանի Չելյաբինսկի մարզի «Մեչել Կոքս» գործարանում: Պայթյունի հետեւանքով զոհվել է մեկ մարդ, մի քանիսը

ստացել են վնասվածքներ: Դեպքի վայրում իրականացվում են վթարավերականգնողական աշխատանքներ:

Նախնական տվյալներով՝ վթարի պատճառը գազի արտահոսքն է: Պայթյունից հետո գործարանում հրդեհ է բռնկվել, փլուզվել են շինության պատերը՝ 80 քմ մակերեսով:

Ֆաինա Թյունիբաբյան

Հաղորդում է ԼՂՀ Փրկարար ծառայությունը

Մարտի 4-ից 11-ը

Հրդեհներ

Մարտի 6-ին հրդեհ է բռնկվել ք.Ստեփանակերտի Մաշտոցի 11 հասցեում: Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհի հետեւանքով այրվել են 2 հա չոր խոտ եւ թփուտներ:

* * *

Մարտի 7-ին, ժամը 19:18-ին հրդեհ է բռնկվել Ասկերանի շրջանի Դաշուշեն գյուղի մոտակայքում: Հրդեհը մարվել է 20:20-ին, այրվել են չոր խոտ եւ թփուտներ:

* * *

Մարտի 10-ին, ժամը 15:01-ին հրդեհ է բռնկվել ք. Ստեփանակերտի 5-րդ դպրոցի մոտ: Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Հրդեհը մարվել է 16:05-ին: Հրդեհի հետեւանքով այրվել է չոր խոտ:

* * *

Նույն օրը՝ ժամը 14:06-ին հրդեհ է բռնկվել Մարտակերտի շրջանի Վանք գյուղում: Այրվել է չոր խոտ:

Զենք-զինամթերք

Մարտի 5-ին Ասկերանի շրջանի Խանաբադ գյուղի տարածքում հայտնաբերվել է 1 միավոր գնդիկավոր բեկորային ավիառումբ: Նշված զինամթերքը վնասազերծվել է ՓԾ արագ արձագանքման հատուկ ստորաբաժանման սակրավորների կողմից:

* * *

Մարտի 9-ին Ստեփանակերտ քաղաքի Շինարարների փողոցում հայտնաբերվել է 1 միավոր գնդիկավոր բեկորային ավիառումբ: Դեպքի վայր են մեկնել ՓԾ սակրավորները, ժամը 11:50 իրականացվել է պայթյուն եւ գտածոն վնասազերծվել է:

Հրդեհ «Օպերա» գիշերային ակումբում

Ուժեղ հրդեհ է բռնկվել Մոսկվայի կենտրոնում՝ «Օպերա» գիշերային ակումբում: Վերջին տվյալների համաձայն, մեկ մարդ զոհվել է, եւս երկուսը համարվում են անհետ կորած: Մեկ այլ տեղեկատվության համաձայն, անհետ կորել է միայն մեկ մարդ:

Ճշտված տվյալների համաձայն, հրդեհի մակերեսը կազմել է 1200 կմ², 800 կմ² տանիքը փլուզվել է: Հաղորդվել է, որ հրդեհի ժամանակ ակումբում երեք մարդ է եղել՝ երկու պահակային ծառայող եւ բանվոր, որոնց հաջողվել է դուրս գալ: Ակումբին հարակից չորսհարկանի հանրակացարանից տարահանվել է 250 մարդ:

Հրդեհի մարմանը մասնակցել է 25 հրշեջ-մարտական հաշվարկ եւ 12 շարժասանդուղք:

Նման ուժեղ հրդեհի պատճառը կարող էր հակահրդեհային կանոնների խախտումը լինել՝ դեռեւս շինարարական աշխատանքների ժամանակ: Բարեբախտաբար, մարտի 9-ի գիշերն այս ակումբում հավաքույթ չի եղել՝ այստեղ շինարարական աշխատանքներ էին կատարվում:

Ակումբ՝ «սեւ» ցուցակից

«Օպերա» գիշերային ակումբը բացվել է 2006 թ.: Այն աշխատում էր 18:00-ից մինչեւ 06:00-ն: Համաձայն ցուցապաստառների, մարտին 7-ին այստեղ պետք է ելույթ ունենար ԴիՋեյ Գրուվը:

Դեկտեմբերի կեսին Մոսկվայի դատախազությունը հայտնել էր ստուգումների ժամանակ հայտնաբերված հակահրդեհային անվտանգության խախտումների մասին: Մասնավորապես, բոլոր դռները չէ, որ բացվում էին շենքից ելքի ուղղությամբ, էլեկտրահաղորդակցման համակարգերի մոնտաժն իրականացվել էր էլեկտրաէներգետիկայի նորմատիվային փաստաթղթերի պահանջների խախտումով, ոչ բոլոր սրահներում էին տեղադրված ավտոմատ ազդանշանային, կրակմարիչ համակարգեր: Ակումբի գործունեությունը 30 օրով դադարեցվել էր՝ սխալներն ուղղելու համար: Թեեւ այստեղ հասցրել էին վերացնել նշված թերությունների մի մասը, այնուամենայնիվ, խախտումներ դեռ առկա էին:

Տուժածների թվով ամենախոշոր հրդեհը տեղի է ունեցել 2009 թ. դեկտեմբերի 5-ի գիշերը՝ Պերմի «Կաղ նժույգ» ակումբում: Հրդեհի հետեւանքով զոհվել է 155 մարդ, մինչեւ այժմ հիվանդանոցներում 11 տուժած է մնացել: Նախնական տվյալների համաձայն, դեպքի պատճառը փակ տարածքում հրատեխնիկայի կիրառման կանոնների խախտումն է եղել:

Պերմի ակումբում տեղի ունեցած դեպքից հետո, ամբողջ Ռուսաստանի տարածքում իրականացվեցին նման հաստատություններում հրդեհային անվտանգության կանոնների պահպանման ստուգումներ:



Սառույցի պաշարներ՝ Լուսնի վրա

Գիտնականները սառույցի պաշարներ են հայտնաբերել Լուսնի հյուսիսային բեւեռի շրջանում՝ հնդկական «Չանդրայան-1» տիեզերական հետազոտական սարքի օգնությամբ: ԱՄՆ-ի աէրոնավտիկայի եւ տիեզերական տարածության հետազոտության ազգային վարչության (ՆԱՍԱ) փորձը ցույց է տվել, որ ջրային սառույց է պարունակվում բեւեռի շուրջ տեղակայված ավելի քան 40 խառնարաններում՝ 2-ից 15 կմ շառավղով:

Հայտնագործությունն արվել է տիեզերական սարքի վրա Մինի-ՍԱՐ ռադարի տեղադրման միջոցով: Այն կառուցել են ՆԱՍԱ-ի մասնագետները՝ Լուսնի վրա հանածոներ գտնելու համար:

Խառնարաններում սառույցի ճշգրիտ չափը որոշված չէ, սակայն ՆԱՍԱ-ում կարծում են, որ սառցե շերտի հաստությունը նվազագույնը երկու մետր է: Այդպես, Հյուսթոնի Լուսնային եւ մոլորակային հետազոտությունների ինստիտուտի աշխատակից Փոլ Սփուդիսը հաշվարկել է, որ Լուսնի այդ շրջանում հայտնաբերված ջրային սառույցի պաշարների ընդհանուր ծավալն առնվազն 600 մլն տոննա է:

ՆԱՍԱ-ի մասնագետների կարծիքով, այս հայտնագործությունը վկայում է այն մասին, որ Երկրի բնական արբանյակի վրա ջրի պաշարներ են եղել, որոնք Լուսնի մակերեսին տեղի ունեցող գործընթացների արդյունքում բյուրեղացել են ու սառույց դարձել: Ավելի վաղ գիտնականները նաեւ ենթադրություն են արել, թե ինչպես է ջուրը հայտնվել Լուսնի վրա: Վարկածներից մեկի համաձայն, այն այստեղ են հասցրել երկնաքարերը, որոնք բախվել են Երկրի արբանյակին, ըստ մյուսի՝ երկնային մարմինների անկումից ջուրը թափանցել է Լուսնի խորքերը: Վարկած կա նաեւ, որ արեւային քամին ջրածնի ատոմներ է բերել, որոնք խառնվել են գրունտի թթվածնի ատոմների հետ:

Դրանից առաջ, «Չանդրայան-1»-ը Լուսնի վրա մի քանի բեւեռային խառնարաններ էր հայտնաբերել, որոնք Երկրից տեսանելի չեն: Հնդկական արբանյակի արած հայտանգործությունները, ըստ հետազոտողների, լուրջ գիտական հետաքրքրություն են ներկայացնում եւ գիտնականների առջեւ նոր խնդիրներ են դնում:

«Չանդրայան-1»-ի գործարկումն ու թռիչքն անցյալ տարի Հնդկաստանի՝ տիեզերքի հետազոտման ոլորտում հավակնոտ ծրագրերի առաջին քայլն էր: Այժմ Տիեզերական հետազոտությունների հնդկական կազմակերպությունը ծրագրում է Ռոսկոսմոսի հետ սկսել «Չանդրայան-2» նախագիծը: Այն նախատեսում է, որ 2012 թ. հնդկական հրթիռ-կրիչի օգնությամբ Լուսին կուղարկվի GSLV տիեզերանավը, որը բաղկացած կլինի ուղեծրային եւ վայրէջքային մոդուլներից: 2020-ին ծրագրվում է Լուսին ուղարկել հնդիկ տիեզերագնաց, իսկ 2030 թ.՝ մասնակցություն դեպի Մարս ուղեւորվող միջազգային արշավախմբին:

սեյսմիկ պաշտպանություն

Ս. թ. մարտի 4-ից 10-ը ՍՊԱԾ-ի սեյսմիկ կայանները Հայաստանի եւ նրան հարակից տարածքներում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ գրանցել են մեկ թույլ երկրաշարժ: Այն տեղի է ունեցել մարտի 8-ին Հայաստան-Ադրբեջան սահմանային գոտում՝ Վարդենիս քաղաքից 25 կմ դեպի հյուսիս-արեւելք, որի ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 3 բալ:

Տարածաշրջանում. 3 բալ եւ ավելի ուժգնությամբ տեղի է ունեցել վեց երկրաշարժ: Մարտի 5-ին եւ 10-ին Իրանում 3-4 բալ ուժգնությամբ երկրաշարժեր են գրանցվել՝ Խոյ քաղաքից համապատասխանաբար 17 կմ եւ 35 կմ դեպի հյուսիս-արեւմուտք: Մարտի 7-ին Խոյից 28 կմ դեպի արեւելք տեղի է ունեցել 3 բալանոց սեյսմիկ ցնցում: Հաջորդ օրը Թուրքիայի արեւելյան մասում՝ Էլյազիգ քաղաքից 74 կմ դեպի հյուսիս-արեւելք, գրանցվել է 8 բալ ուժգնությամբ ուժեղ երկրաշարժ: Պաշտոնական տվյալներով երկրաշարժի հետեւանքով զոհվել է 41 մարդ, վիրավորվել ավելին քան 100-ը, ավերվել են շենքեր եւ շինություններ: Այդ օրը 3-4 բալ ուժգնությամբ երկրաշարժ է գրանցվել Ռուսաստանում՝ Դաղստանի Ռութուլ քաղաքից 21 կմ դեպի հարավ-արեւելք: Նույն ուժգնությամբ երկրաշարժ է տեղի ունեցել մարտի 9-ին Իրան-Թուրքիա սահմանային գոտում՝ Իրանի Մակու քաղաքից 21 կմ դեպի արեւմուտք:

Տարածաշրջանից դուրս. 6.0 եւ ավելի մագնիտուդով գրանցվել է յոթ ուժեղ երկրաշարժ, որոնք տեղի են ունեցել խաղաղօվկիանոսյան օղակաձեւ հրե գոտում: Մարտի 4-ին 6.5 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ է տեղի ունեցել Վանուատու կղզիների հատվածում: Շարունակվում է սեյսմիկ ակտիվությունը Չիլիի տարածքում: Մարտի 4-ին՝ 6.3 մագնիտուդով, իսկ 5-ին՝ 6.0 եւ 6.6 մագնիտուդերով, ուժեղ երկրաշարժեր են գրանցվել Չիլիի ափամերձ գոտում: Մարտի 5-ին ուժեղ երկրաշարժ է տեղի ունեցել Ինդոնեզիայի Սումատրա կղզու հարավում, որն ունեցել է 6.8 մագնիտուդ: Մարտի 7-ին Խաղաղ օվկիանոսի կենտրոնական մասում գրանցվել է ուժեղ երկրաշարժ՝ 6.3 մագնիտուդով: Հաջորդ օրը Մարիանյան կղզիների հյուսիսային շրջանում տեղի է ունեցել 6.0 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ: Նշված երկրաշարժերի հետեւանքով զոհերի եւ ավերածությունների մասին տեղեկություններ չկան:

ՍՊԱԾ գործակալություն

եղանակի տեսություն

Մարտի 4-10-ը դիտված հիդրոօդերեւութաբանական պայմանները ՀՀ-ում

Հանրապետությունում մարտի 4-10-ը առանձին շրջաններում ժամանակ առ ժամանակ դիտվել են տեղումներ՝ առավելապես անձրեւի տեսքով: Տեղումների քանակը կազմել է 3-16 մմ, առանձին շրջաններում 28-37 մմ: Օդի ջերմաստիճանը ողջ շաբաթվա ընթացքում բարձր է եղել նորմայից:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Սյունիքի հովիտներում՝ +24... +26 ºC, Արարատյան դաշտում, Արցախում՝ +19... +22 ºC, Արարատյան դաշտի նախալեռներում՝ +13... +1 7 ºC (Ուրցաձորում՝ +21 ºC) Տավուշում՝ +16... +18 ºC, Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ +15... +19 ºC, լեռնային շրջաններում՝ +7... +12 ºC:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է լեռնային շրջաններում՝ -6... -11 ºC, Լոռիում՝ -3... -7 ºC, Արարատյան դաշտում՝ 0... -4 ºC, Տավուշում, Սյունիքի նախալեռներում՝ -1... -3 ºC, Սյունիքի հովիտներում, Արցախում՝ +1... +5 ºC:

Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

Մարտի 12-ի գիշերը, 13-ի ցերեկը, 14-ից 19-ը շրջանների մեծ մասում. 12-ի ցերեկը, 13-ի գիշերը՝ առանձին շրջաններում սպասվում են տեղումներ, 15-16-ը՝ տեղ-տեղ՝ զգալի: Օդի ջերմաստիճանը 12-ին արեւելյան շրջաններում կբարձրանա 5-7 աստիճանով, մնացած շրջաններում էապես չի փոխվի, 13-16-ին աստիճանաբար կնվազի ընդհանուր առմամբ 4-8 ºC-ով:

Մարտի 12-ին նվազագույն ջերմաստիճանը Արարատյան դաշտում կտատանվի +5...+10 ºC, Սյունիքի հովիտներում՝ 7...+12 ºC, Տավուշում՝ +3...+8 ºC, Սյունիքի նախալեռներում՝ +5...+8 ºC, Լոռիում՝ +2...+6 ºC, լեռնային շրջաններում՝ 0...+5 ºC սահմաններում:

Առավելագույն ջերմաստիճանը Արարատյան դաշտում կտատանվի +17...+20 ºC, Սյունիքի հովիտներում՝ +22... +26 ºC, Սյունիքի նախալեռներում՝ +15... +20 ºC, Տավուշում՝ +14... +19 ºC, Լոռիում՝ +13... +18 ºC, լեռնային շրջաններում՝ +10... +15 ºC սահմաններում:

Երեւանում մարտի 12-ի գիշերը, 13-ի ցերեկը, 14-ից 16-ը ժամանակ առ ժամանակ սպասվում է անձրեւ: Մարտի 12-ի ցերեկը, 13-ի գիշերն էական տեղումներ չեն սպասվում: Մարտի 14-ից 16-ը սպասվում է քամու ուժգնացում՝ 15-20 մ/վրկ:

Օդի ջերմաստիճանը 12-ի գիշերը կտատանվի +7...+9 ºC, ցերեկը +19...+21 ºC սահմաններում:

Մասնագետի անկյուն

ԱԻՆ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը եւ տեխնածին վթարների կանխարգելումը

Եթե բնական աղետները կանխատեսել ու կանխարգելել հնարավոր չէ, ապա նույնը չի կարելի ասել տեխնածին վթարների մասին: Դրանք հնարավոր է կանխել այն դեպքում, երբ արտադրական վտանգավոր օբյեկտները՝ վերելակները, շարժասանդուղքները, ամբարձիչները, բենզալցակայանները, գազալցավորման կայանները եւ այլն, տարին մեկ անգամ փորձաքննություն անցնեն եւ թերությունները ժամանակին վերացվեն: Այդ դեպքում միայն հնարավոր կլինի նվազեցնել տեխնածին վթարների թիվը եւ ռիսկի չենթարկել օգտվողների ու շահագործողների կյանքը:

2006 թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում գործում է «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքը, որը սահմանում է արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձանց եւ արտադրական վտանգավոր օբյեկտում տեխնիկական անվտանգության գծով պատասխանատուների իրավունքներն ու պարտականությունները: Այսինքն՝ ցանկացած տեսակի արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործելուց առաջ, առաջին եւ կարեւոր հանգամանքը տեխանվտանգության ինժեներ ունենալն է: Սակայն, խոսքը թափուր հաստիքը որեւէ՝ մեկով լրացնելու մասին չէ, քանի որ տեխանվտանության ինժեների ուսերին է դրվում արտադրական վտանգավոր օբյեկտի անվտանգ շահագործման պատասխանատվությունը: Այսինքն, նրա մասնագիտական որակավորման աստիճանից է կախված թե՛ արտադրական վտանգավոր օբյեկտի սեփականատիրոջ, թե՛ այնտեղ աշխատող մարդկանց եւ թե՛ դրանից օգտվողների կյանքը:

Տեխնածին վթարների հետեւանքով մարդկանց կյանքին սպառնացող վտանգը կարելի է նվազագույնի հասցնել կամ ընդհանրապես բացառել, եթե շահագործման պատասխանատուները՝ արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձինք կամ տեխանվտանգության ինժեներներն ընդամենը կատարեն օրենքի պահանջը:

- Արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձինք, ի պաշտոնե պարտավոր են, գիտեն եւ ծանոթ են արտադրական վտանգավոր օբյեկտների անվտանգ շահագործմանը ներկայացվող պահանջներին, քանի որ օրենքով սահմանվում է, որ յուրաքանչյուր արտադրական վտանգավոր օբյեկտի համար պետք է նշանակված լինի եւ գոյություն ունենա պատասխանատու անձ, որը պետք է ունենա որակավորում եւ պետք է համապատասխան որակավորման դասընթաց անցնի, - ասում է ԱԻՆ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնի տնօրենի տեղակալ Արամ Օհանյանը:

ԱԻՆ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնը 2006 թվականից իրականացնում է տեխանվտանգության մասնագետների որակավորում, տալիս է վկայական: Որակավորված մասնագետի ներկայությունը ձեռնարկություններում, գազի, վառելիքի լիցքավորման կայաններում, եւ այլ օբյեկտներում լուրջ երաշխիք է, որ տեխնածին վթարները հնարավորինս քիչ կլինեն:

- Արտադրական վտանգավոր օբյեկտներում տեխնիկական անվտանգության կանոնների եւ տեխանվտանգության օրենսդրության պահանջների իրականացման համար պատասխանատվություն է կրում հենց ինքը՝ արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործող անձը,- ասում է Արամ Օհանյանը,- *քանի որ հենց արտադրական վտանգավոր օբյեկտներում տարին 365 օր, օրը 24 ժամ տեղի է ունենում այն ամենն, ինչը ծնում է տեխնածին վթարի ռիսկ, եւ հենց այդտեղ էլ պետք է դա կանխվի*:

Ոլորտը	2006 թ.		2007 թ.		2008 թ.		2009 թ.	
	դեպքեր	զոհեր	դեպքեր	զոհեր	դեպքեր	զոհեր	դեպքեր	զոհեր
Լեռնահանքային արդյունաբերություն	16	6	9	3	15	5	11	5
Քիմիական արդյունաբերություն եւ մետալուրգիա	2	0	1	0	6	0	4	5
Գազասարքավորումների շահագործում	4	9	7	2	14	3	3	1
Ամբարձիչ սարքավորումների շահագործում	2	1	3	1	4	5	6	4
Կաթսայատեղակայանքների շահագործում	0	0	1	0	0	0	0	0
Վառելիքի լիցքավորման կայաններ	1	1	0	0	0	0	1	0
Լողամիջոցների շահագործում	2	1	1	0	0	0	1	1
Ընդհանուր թիվը	27	18	22	6	39	13	26	16

Տեխնածին վթարների ռիսկերը կանխելու համար բոլոր պայմանները կան: Օրենքն ընդունված է, իսկ համապատասխան մարմինը տարին մեկ անգամ փորձաքննություն է իրականացնում եւ վերալակի, ամբարձիչի, շարժասանդուղքի կամ այլ արտադրական վտանգավոր օբյեկտի թերությունների մասին տալիս եզրակացություն: «Իմեքս գրուպը», որը շահագործում է 19 արտադրական վտանգավոր օբյեկտ, արդեն 4 տարի է՝ տարին մեկ անգամ անցկացնում է դրանց փորձաքննություն:

«Իմեքս գրուպ» ՍՊԸ-ի տեխանվտանգության ինժեներ Էդիկ Ավետիսյանն ասում է, որ իրենց բոլոր օբյեկտները գրանցված են եւ տարեկան 1 անգամ անցկացնում են փորձաքննություն:

- Այսօր ես ներկայացրեցի անցյալ տարվա տվյալները, որի ժամկետը մինչեւ ապրիլի 1-ն է, բայց գերադասել եմ ժամանակից շուտ հանձնել:

Ոչ թե ժամանակից շուտ, այլ եթե ընդամենը ժամանակին «Հիդրոէներգաշին» ՓԲԸ-ի ղեկավարությունը ԱԻՆ Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոնում գրանցեր իր կողմից շահագործվող թրթուրավոր տեսակի կռունկը եւ ժամանակին վերացվեին դրա թերությունները, ապա տեղի չէր ունենա հերթական ողբերգական դեպքը: Պարզելու համար, թե ինչպես է ամբարձիչ սարքավորումների տեխնիկական զննությունն իրականացվում, զրուցեցինք ԱԻՆ Տեխանվտանգության ազգային կենտրոնի ամբարձիչ սարքավորումների գլխավոր փորձագետ Գեորգի Գեղեցյանի հետ.

- Սկզբում ստուգվում են կռունկի հիմնական հանգույցները, ենթակռունկային գծերը, իրենց փակուղային նեցուկները, կռունկի աշտարակն ամբողջությամբ, կռունկի հակակշիռը, խցիկը, որտեղ կռունկավարն է նստում: Կարեւոր մասերից է նաեւ կռունկի սլաքը, որի վրա տեղաշարժվում է բեռնասայլակը: Երբ փորձաքննության ժամանակ հայտնաբերվում են թերություններ, օրինակ՝ մետաղական մասերը ժանգոտված են այն աստիճանի, որ թույլատրելի չեն, դրանց հանգույցների միացման մասերը, քանդովի մասերը կամ զոդակարերի մասերն ունեն այնպիսի թերություններ, որոնք կարող են բերել հետագա պատահարների, կազմվում է արձանագրություն, նշվում են թերությունները: Ամբարձիչ սարքավորումների դեպքում շատ կարեւոր է ճոպանների վիճակը պարզելը, քանի որ դրանք անընդհատ շարժման մեջ են եւ դրանց միջոցով են նաեւ տեղափոխվում շինարարական ծանր բեռները:

Վերջին 4 տարիներին ամբարձիչ սարքավորումների շահագործման ժամանակ տեղի է ունեցել 15 դեպք, որոնց հետեւանքով զոհվել է 11 մարդ:

- Արտադրական վտանգավոր օբյեկտ շահագործելիս նստեսվարող սուբյեկտը գործ է ունենում մարդու կյանքի եւ առողջության հետ, եւ գումարներ խնայելով փորձել խախտել օրենսդրության պահանջները եւ իրենց կողմից շահագործվող արտադրական վտանգավոր օբյեկտներն ԱԻՆ Տեխանվտանգության ազգային կենտրոնում չգրանցելն ու տարեկան մեկ անգամ տեխզննում չիրականացնելն, իմ կարծիքով, խիստ հանցավոր մոտեցում է այն մարդկանց նկատմամբ, ովքեր աշխատում են այդ օբյեկտներում, ովքեր օգտվում են այդ ծառայություններից,- ասում է ԱԻՆ Տեխանվտանգության ազգային կենտրոնի տնօրենի տեղակալ Արամ Օհանյանը:

Ժամանակն է, որ քաղաքացիները պահանջեն, իսկ տնտեսվարողները կատարեն օրենքի պահանջը: Քանի որ, յուրաքանչյուր վերելակի փորձաքննության համար, օրինակ, տարեկան պետք է վճարել ընդամենը 2950 դրամ, իսկ ամենաթանկ փորձաքննությունը, որը կազմում է մոտ 100 հազար դրամ տարեկան, կամ՝ օրական 276 դրամ, պետք է վճարեն գազալցակայանները, որպեսզի խուսափեն տեխնածին վթարներից ու մարդկանց կյանքը հարցականի տակ դնելուց:

Եվ վերջում, հիշեցնում ենք, որ արտադրական վտանգավոր օբյեկտները ռեեստրում չգրանցելու եւ փորձաքննության չներկայացնելու դեպքում նշանակվում է տուգանք՝ մեկ միլիոն դրամի չափով՝ յուրաքանչյուր օբյեկտի համար:

Արմինե Գրիգորյան

Երկրագնդի սեյսմիկ ակտիվությունն ու Հայաստանը

2010 թվականի դեռ 2 ամիսն ենք ապրել, սակայն մոլորակի վրա արդեն մի քանի խոշոր ու ավերիչ երկրաշարժ է տեղի ունեցել: Արտակարգ իրավիճակների նախարարության Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության տվյալների համաձայն, եթե 2009 թվականի 12 ամիսների ընթացքում ամբողջ աշխարհում 5.5 մագնիտուդից ավելի ուժով 1764 երկրաշարժ է տեղի ունեցել, ապա այս տարի, միայն առաջին երկու ամիսներին արդեն գրանցվել է նմանատիպ 523 երկրաշարժ, ինչը գրեթե երկու անգամ ավելի է, քան անցյալ տարվա ցուցանիշը:

Տեղի ունեցող հարյուր-հազարավոր երկրաշարժերից ոչ բոլորն են առաջին նորություն դառնում աշխարհի տարբեր ծայրերում գործող լրատվամիջոցների համար: Այս տարի առանձնացան հատկապես 3-ը՝ Հայիթիի, Չիլիի եւ Թուրքիայի երկրաշարժերը:

Այս տարվա հունվարի 12-ին տեղի ունեցավ Հայիթիի երկրաշարժը, ուժգնությունը՝ 7 մագնիտուդ: Զոհերի թիվը հասավ 222 500-ի: Անօթեւան մնաց 3 միլիոն մարդ: Երկրաշարժը, ճիշտ է, եղել էր ցերեկը, սակայն զոհերը, միեւնույն է, չափազանց շատ էին, որովհետեւ երկրում շենքերը բացարձակապես սեյսմակայուն չէին: Փորձագետների կարծիքով դրանք չէին դիմանա նույնիսկ 2 մագնիտուդ ուժով երկրաշարժի: Փլվել էր նույնիսկ նախագահական նստավայրը:

Հաջորդ ուժեղ երկրաշարժը փետրվարի 27-ին էր՝ Չիլիում՝ 8.8 մագնիտուդ ուժով եւ 11 բալ ուժգնությամբ: Երկրաշարժի հետեւանքով ցունամի էր առաջացել, սակայն այն մեծ թվով զոհերի պատճառ չդարձավ, որովհետեւ մարդիկ հասցրեցին պատսպարվել լեռներում: ՆԱՍԱ-ի գիտնականների ուսումնասիրությունները պարզեցին, որ Չիլիի երկրաշարժի պատճառով օրվա տեւողությունը կրճատվել է 1.26 միկրովայրկյանով, իսկ երկրի առանցքը շեղվել է 8 սմ-ով:

Չնայած այս երկրաշարժը գրեթե 2 մագնիտուդով ուժեղ էր Հայիթիի երկրաշարժից, սակայն զոհերի թիվն անհամեմատ ավելի քիչ էր՝ 800 հոգի: Մասնագետներն այս փաստը հիմնականում բացատրում են նրանով, որ Չիլիում սեյսմակայուն շինարարության ոլորտը բավական զարգացած է, իսկ բնակչությունը՝ պատրաստված, որովհետեւ վերջին 2 հարյուրամյակում այստեղ երկրաշարժեր շատ են եղել, իսկ Հայիթիում վերջին անգամ հզոր երկրաշարժ եղել էր 1751 թվականին, ու երկուսուկեսդարյա սեյսմիկ լռության հետեւանքով այստեղ ոչ շենքերն էին բանի պետք, ոչ էլ մարդիկ ու իշխանությունները համապատասխան գիտելիքներ ունեին:

Իսկ ոչ պակաս սեյսմիկ ակտիվ գոտում գտնվող Հայաստանի վրա ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ երկրագնդի սեյսմիկ ակտիվության ուժեղացումը:

- Եթե խոսենք Հայիթիի եւ Չիլիի երկրաշարժերի մասին, տարածությունը շատ մեծ է Հայաստանի ու այդ երկրների միջեւ՝ մոտ 10000 կմ, եւ այդ հեռավորությունից անմիջական ազդեցություն մեր տարածաշրջանում չի կարող լինել, - ասում է ԱԻՆ Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության պետի տեղակալ Հրաչյա Պետրոսյանը, - *բացի այդ, օրինակ, Չիլին երկու տեկտոնական սալերի՝ Նասկայի եւ Հարավամերիկյան սալերի բախման գոտում է գտնվում, իսկ Հայաստանի տարածքը գտնվում է Եվրասիական եւ Արաբական սալերի բախման գոտում: Նկատի ունեմ այն, որ տարբերություն շատ մեծ է նաեւ*

>>>

1-01 հրշեջ ծառայություն

Հրդեհներ թատրոններում եւ մշակութային այլ օբյեկտներում

Սկիզբը՝ նախորդ համարներում

Հնուց ի վեր հրդեհները չարիք են եղել թատրոնների համար: Մատների վրա կարելի է հաշվել այն բեմերը, որոնց խնայել է կրակի ավերիչ ուժը: Թերեւս միայն անտիկ ժամանակաշրջանի թատրոնին՝ իր բաց ամֆիթատրոնով եւ լայնարձակ բեմահարթակով, առանց կուլիսների ու վարագույրների, հաջողվել է խուսափել այդ փորձանքից:

Թատրոններում տեղի ունեցած խոշոր հրդեհների առաջին հիշատակությունները թվագրվում են 1668 թվականով, երբ Դանիայի թագավորության մայրաքաղաք Կոպենհագենի թատրոնի հրդեհի ժամանակ առաջացած խուճապի ու հրմշտոցի պատճառով զոհվեց 290 մարդ: Դրանից հետո աշխարհի 1500-ից ավելի թատրոններ տուժեցին հրդեհից, ընդ որում՝ կեսից ավելին հիմնահատակ կործանվեց: Ոչ լիարժեք վիճակագրական տվյալների համաձայն, 18-20-րդ դարերում թատրոններում, կրկեսներում եւ այլ մշակութային օբյեկտներում տեղի ունեցած հրդեհները խլել են 12,5 հազարից ավելի մարդու կյանք: Անդրադառնանք տխուր վիճակագրության չոր թվերին. Ամստերդամի թատրոն, 1772 թվական՝ 16 զոհ, 1778 թվական, Սարագոսայի «Կոլիզեյ» թատրոն՝ 77 զոհ, 1794 թվական, Կապոդի-Իստրայի թատրոն՝ 1000 զոհ, 1836 թվական, Պետերբուրգ, Լեմանի շրջիկ թատրոն՝ 126 զոհ, 1845 թվական, Կանտոնի թատրոն՝ 1670 զոհ, 1846 թվական, Քվեբեկի թատրոն՝ 200 զոհ, 1876 թվական, Նյու Յորքի Կոնվեյ թատրոն՝ 300 զոհ, 1881 թվական, Վիեննայի թատրոն՝ 600-ից ավելի զոհ, 1883 թվական, Բերդիչովի կրկես՝ 300 զոհ, 1887 թվական, Փարիզի կոմիկական թատրոն՝ 200 զոհ:

Մի քիչ ավելի մանրամասն անդրադառնանք 20-րդ դարի թատերական աղետալի հրդեհներին: Այս ցուցակում առաջինը Չիկագոյի «Իրոկեզ» թատրոնում 1903 թվականի դեկտեմբերի 30-ին բռնկված հրդեհն է, որտեղ զոհերի թիվը հսկայական է՝ 600 մարդ: Հրդեհն առաջացել էր լուսային էֆեկտ ստանալու համար օգտագործվող ացետիլենային լամպի կայծից: Թատրոնի աշխատակիցները ջանում են մարել կրակը, սակայն չի հաջողվում: Փորձելով կանխել կրակի ներթափանցումը բեմից հանդիսասրահ՝ թատրոնի տնօրենը հրամայում է իջեցնել բեմի հակահրդեհային վարագույրը, սակայն կես ճանապարհին մեխանիզմը խափանվում է եւ ամենակուլ բոցը տարածվում է դեպի հանդիսականներով լեցուն դահլիճ: Սրանով թատրոնի ղեկավարության եւ աշխատակազմի քիչ թե շատ գրագետ գործողություններն ավարտվում են: Հետագայում նրանք մտածում էին միայն իրենց փրկության մասին՝ հանդիսականներին թողնելով բախտի քմահաճույքին: Նույնիսկ փորձ չարվեց ահազանգել քաղաքի հրշեջ ծառայություն: Հանդիսականների մեծ մասը կանայք ու երեխաներ էին, որոնք առաջացած խուճապի եւ հրմշտոցի պայմաններում ընկնում էին ոտքերի տակ եւ ճզմվում: Մի քանի րոպե անց տարահանման ելքերի մոտ գոյացել էին մարդկային մարմիններից կազմված բլրակներ, որոնց բարձրությունը գերազանցում էր 3 մետրը: Ներկայացմանը ներկա 900-ից ավելի հանդիսականների գերակշիռ մասը զոհվեց սարսափելի մահով:

«Իրոկեզ» թատրոնում տեղի ունեցած հրդեհի լուրը տարածվեց աշխարհով մեկ, սակայն շատ քչերն անհրաժեշտ հետեւություններ արեցին՝ շարունակելով երկրորդական դեր հատկացնել հրդեհային անվտանգության հարցերին: Եվ կրակե արհավիրքը շարունակում էր պատժել մարդկանց՝ իրենց անհոգության ու անտարբերության համար:

Թատրոնում ամեն ինչ դյուրավառ է՝ կտորե կուլիսներ, փայտե բեմ, դեկորացիաներ, զգեստապահարան, ներկ ու գրիմ: Սրանք գումարվում են բոլոր շենք-շինություններին հատուկ հրդեհավտանգ տարրերին ու հանգույցներին: Հրշեջ-մասնագետներն ամբողջ աշխարհում, հաշվի առնելով դառը փորձը, հանգել են մի եզրակացության՝ թատրոնների հրդեհները գործնականում անհնար է մարել, ու հրդեհաշիջում կազմակերպելիս հիմնական շեշտը դրվում է մարդկանց փրկության վրա: Սակայն այդ էլ հաճախ չի հաջողվում, վկա՝ վերը նշված տխուր վիճակագրությունը:

Ցավոք, մեր հանրապետությունը եւս չի խուսափել նմանատիպ հրդեհներից, որոնց արդյունքում զոհվել են մարդիկ, պատճառվել է զգալի նյութական վնաս: Հաճախ անփութությունը, անզգուշությունը, արագ չկողմնորոշվելը, հրդեհը մարելու սխալ միջոցառումների իրականացումը, այս կամ այն շինության հակահրդեհային համակարգի կիսատ-պռատությունը կարող են աղետալի հրդեհների պատճառ դառնալ: Միլիոններ են ծախսվում շենք կառուցելու, դրա հակահրդեհային անվտանգությունն ապահովող համակարգի նախագիծը կազմելու վրա: Սակայն բավական է այսօրվա գործը վաղվան թողնելու մեզ հատուկ բնավորությունը, եւ ամեն ինչ կլինի այնպես՝ ինչպես սովորաբար: Ու դառնում է հնարավոր, որ ընդամենը մեկ կայծից բռնկվի ամիսներ առաջ մեծ շուքով ու հանդիսավորությամբ Երեւանում բացված մարզահամերգային համալիրի ամենակուլ հրդեհը:

1985 թվականի փետրվարի 15-ին, առավոտյան ժամը 9-ի սահմաններում, համալիրի պտտվող տրիբունայի 500 վատտ հզորությամբ լամպում առաջանում է կարճ միացում, շիկացած նիկելի մասնիկներն ընկնում են տրիբունայի աթոռների վուշե պաստառների վրա եւ կրակի փոքր օջախ

ստեղծում: Այդ պահին դահլիճում է լինում համալիրի 2 աշխատակից, որոնք կրակը տեսնելով հազիվ հասցնում են իմաց տալ հակահրդեհային ծառայության պետին: Սա էլ գալով՝ սկսում է իր վերարկուով հարվածել կրակին՝ մարելու փոխարեն ավելի բորբոքելով այն: Հավաքված աշխատակիցները չեն կարողանում գտնել կրակմարիչներ, գտածներն էլ՝ դատարկ են լինում (համալիրն ունեցել է 140 կրակմարիչ, որոնք ներսում անհրաժեշտ տեղերում չեն եղել): Մի քանի ամիս առաջ շահագործման հանձնված ներքին ջրագծի ծորակների վրա էլ փողրակներ չեն լինում, միացված չեն լինում ջրի ճնշումն ապահովող պոմպերը: Կրակի արագ տարածմանը նպաստում է նաեւ միջանցիկ քամին: Հավաքվածները տեսնելով, որ կրակը տարածվել է ամբողջ տրիբունայով, հասել է առաստաղ, անցել համերգային ու մարզադահլիճներ եւ արդեն անհնար է դարձել հրդեհի մարումը՝ նոր միայն ահազանգում են հրշեջ պահպանության կապի կենտրոնական կայան: Չանցած րոպեներ՝ ժամանում են հրշեջները, սակայն կրակն արդեն տարածվել էր ամբողջ համալիրով: Ինչեւէ, հրդեհը մարվում է: Ցավոք, կորուստները լինում են ոչ միայն նյութական (խորհրդային պետությանը հասցվում է ավելի քան 5 միլիոն ռուբլու վնաս): Կոնֆերենց դահլիճում աշխատող բանվորները՝ Ա. Մաթեւոսյանն ու Գ. Գասպարյանը մթության մեջ չկողմնորոշվելով, ծխից շնչահեղձ են լինում:

Հրդեհի հետեւանքով այրվում են համալիրի համերգային դահլիճի եւ պտտվող տրիբունայի երեսպատման փայտե մասերը, փափուկ աթոռները, մարզական դահլիճի աջ եւ ձախ կողմերի աթոռները, բեմական մասն իր ողջ հանդերձանքով, էլեկտրական ցուցատախտակն ու այլ թանկարժեք սարքավորումներ: Ըստ մասնագետների՝ հրդեհը հնարավոր կլիներ արագ մարել, եթե սարքին վիճակում լինեին ջրածորակներն ու կրակմարիչները, ինչպես նաեւ պատասխանատու անձինք տեղյակ լինեին իրենց պարտականություններին, կրակի օջախը հայտնաբերելուց հետո խուճապի չմատնվեին, չդրսեւորեին անկազմակերպվածություն եւ կարողանային ժամանակին մեկուսացնել ու վերացնել կրակը, բացառեին դրա հետագա տարածումը:

Շարունակելի

Սերգեյ Հայրապետյան
ՊՀՏ ՀՀՎՀՔ բաժնի պետ

<<< *երկրաբանականան, սեյսմատեկտոնական առումով:*

Եթե Հայիթին ու Չիլին հեռու են մեզնից, ապա շատ մոտ է Թուրքիան, որտեղ բոլորովին վերջերս՝ մարտի 8-ին 6.2 մագնիտուդ ուժով երկրաշարժ տեղի ունեցավ: Մահացավ 60 մարդ, վնասվեցին ու փլվեցին 100-ավոր տներ, ավերակների վերածվեց 6 գյուղ:

- Թուրքիայի երկրաշարժը թեեւ ամենաթույլն է, բայց ամենամոտն է, այդ պատճառով կունենա իր ազդեցությունը մեր երկրի սեյսմիկ ռեժիմի վրա, թե ինչ ազդեցություն՝ դա ցույց կտան մեր հետագա ուսումնասիրությունները, - պարզաբանում է ԱԻՆ Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության պետի տեղակալ Հրաչյա Պետրոսյանը:

Գաղտնիք չէ, որ Հայաստանում գրեթե ամեն օր երկրաշարժեր են լինում: Դրանց գերակշիռ մասը մարդու համար զգալի չէ, միայն սարքերն են գրանցում: Սակայն այս ամենօրյա ցնցումների ու ընդհանրապես երկրագնդի սեյսմիկ ակտիվության մեծացման պատճառով տագնապել պետք չէ, լրիվ հակառակը. մասնագետները բացատրում են՝ այդպիսով երկրի ընդերքում կուտակված էներգիան լիցքաթափվում է:

- Մեզ մոտ երկրաշարժեր եղել են, լինում են ու կլինեն: Մենք չենք կարող կանխարգելել դրանք, բայց կարող ենք նախապատրաստվել, - ասում է Հրաչյա Պետրոսյանը:

Արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայությունն էլ հենց զբաղվում է երկրաշարժերին պատրաստ լինելու խնդրով: Այստեղ են ուսումնասիրվում ու մշակվում պլաններ, որոնցով պիտի գործի հանրապետությունը երկրաշարժերի ժամանակ:

- Դրանք անհրաժեշտ գործընթացներ են, որոնք մինչեւ երկրաշարժը պետք է իրականացնել: Մենք հիշում ենք՝ Սպիտակի աղետի ժամանակ չէինք կարողանում ձեւակերպել մեր կարիքները՝ անհրաժեշտ դեղորայքի, մթերքի, հանդերձանքի վերաբերյալ, իսկ պլաններն այդպիսի հնարավորություն տալիս են: Հնարավոր է նախատեսել, պլանավորել այն, ինչ մենք ունենք, որպեսզի աղետի դեպքում կարողանանք օգտագործել երկրի ներուժը, իսկ անհրաժեշտության դեպքում դիմենք միջազգային օգնության, - ասում է ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայության տնօրենի տեղակալ Սերգեյ Ազարյանը

Լավ են կազմված պլանները, թե ոչ, պարզ է դառնում ուսումնավարժությունների ժամանակ: Մեծ միջազգային ուսումնավարժություններ Հայաստանում հաճախ են տեղի ունենում: Վերջինը ՄԱԿ-ի ԻՆՍԱՐԱԳ որոնողափրկարարական խմբի մեծ ուսումնավարժանքն էր, որ տեղի ունեցավ 2009 թվականի մարտ ամսին: Հաջորդը ՆԱՏՕ-ի ուսումնավարժությունն է, որ ծրագրվում է անցկացնել այս տարի՝ սեպտեմբերի 11-17-ը:

- Ուսումնավարժության թեման ուժեղ երկրաշարժն է, որի ժամանակ եւս մեկ անգամ կարելի է ստուգել մեր պլանների ռեալությունը, - ասում է ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայության տնօրենի տեղակալ Սերգեյ Ազարյանը,- *չնայած՝ մենք արդեն տեսնում ենք, որ պետք է վերանայել դրանք, որովհետեւ նոր տեխնոլոգիաներ, նոր մեթոդներ, մոտեցումներ կան, որոնք անհրաժեշտ է օգտագործել պլանավորման գործընթացում:*

Երկրաշարժի դեպքում գործելու պլանները վերանայելու եւ թարմացնելու նպատակով ԱԻՆ ՀՓՕ-ն համագործակցում է նաեւ Ճապոնիայի կառավարության հետ: Համատեղ ծրագիրը տեւելու է 2 տարի:

- Պիտի մշակենք նոր պլան՝ հաշվի առնելով նոր տեխնոլոգիաները, նոր մոտեցումները, սեյսմիկ վտանգը, սեյսմիկ ռիսկը, կազմենք նոր գեոտեղեկատվական համակարգեր, դրա հիման վրա կազմենք նոր պլաններ, - ասում է Սերգեյ Ազարյանը:

ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայության կողմից մշակված է գեոտեղեկատվական համակարգ՝ GIS կոչվող ծրագիրը, որը թույլ է տալիս մոդելավորել երկրաշարժի հնարավոր հետեւանքները;

- Մենք ծրագրում հաշվի ենք առնում բավական մեծ ճանկությամբ տվյալներ շենքերի վերաբերյալ՝ շենքերի հարկերը, սեյսմակայունությունը, սեյսմադեֆիցիտը, տեխնիկական վիճակը, տարածքի սեյսմիկ վտանգը եւ այլն: Այդ ամբողջը կա GIS-ում, բացի մի քանի տվյալներից՝ երկրաշարժի կորդինատները, ուժգնությունը եւ խորությունը, ժամանակը: Երբ այդ տվյալներն էլ ենք դնում ծրագրի մեջ, ստանում ենք հնարավոր պատկերը՝ ինչ կարող է լինել, - բացատրում է ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայության տնօրենի տեղակալ Սերգեյ Ազարյանը:

ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայությունը նախապատրաստվում է երկրաշարժի թեմայով ուսումնավարժության, թարմացնում է պլանները, իսկ Սեյսմիկ ծառայությունն աշխատում է շուրջօրյա ու վստահեցնում, որ այս պահի դրությամբ Հայաստանի տարածքում վտանգավոր սեյսմիկ երեւույթներ չեն նկատվում:

աղետի դասերը

Ուղերձ Հանսին-Ավաձիից

Այսօր արդեն շատերը գիտեն, որ Ճապոնիան սեյսմավտանգ գոտում է, եւ այստեղ հաճախ են ավերիչ երկրաշարժեր լինում: Ճապոնացիները, սակայն, սովորել են հաշտ ապրել տարերքի հետ: Աշխարհին տեխնոլոգիական հրաշքներով զարմացնող այս երկիրը եւս մի ուսանելի ոլորտ է բացահայտել՝ սեյսմակայուն շինարարություն:

Այս տարվա՝ Հայիթիի եւ Չիլիի կործանարար երկրաշարժերը եւս մի հիշեցում են, որ անփութությունը շինարարության ոլորտում պատժելի է: Մենք կարող ենք դա հաստատել, մենք դրա ականատեսն ենք եղել 88-ին՝ Սպիտակում: Իսկ որ իրազեկվածությունը եւս կարող է կյանքեր փրկել, նույնպես յուրացրել ենք:

Ձեզ ենք ներկայացնում ճապոնական Հանսին-Ավաձի քաղաքի 2005 թ. հունվարին տեղի ունեցած ուժեղ երկրաշարժից քաղված դասերի ժողովածուն, որ մեզ են տրամադրել մեր ճապոնացի գործընկերները: Մասնագետների կողմից՝ այդ երկրաշարժի հետեւանքների ու հետագա իրադարձությունների մանրակրկիտ հետազոտման ու մշակման արդյունքում ստեղծված այս ձեռնարկը, կարծում ենք, օգտակար կլինի բոլորի համար:

Սկիզբը՝ նախորդ համարում

Աղետի ժամանակ անվտանգության մշակույթի դաստիարակման հիմնական կետերը

1. Պետք է կարգավորել ինքնօգնությունը, փոխօգնությունն ու հանրային օգնությունը

Հանսին-Ավաձիի երկրաշարժից հետո գիտակցվեց «ինքնօգնության» ուժը, որը գործադրում է յուրաքանչյուրն անձնապես, «փոխօգնության» ուժը, որը նպաստում է բնակչության, ձեռնարկությունների, կամավորների, մասնագետների, վարչարարների եւ ուրիշների համագործակցությանը, եւ «հասարակական օգնության» ուժը, որն իրականացնում է կառավարությունը:

Աղետի առաջացման ժամանակ հիմնական սկզբունքը հետեւյալն է. «յուրաքանչյուրը հոգ է տանում իր անվտանգության մասին»: Այդ պատճառով էլ կարեւոր է առօրյա կյանքում պատրաստվել աղետներին եւ համապատասխան միջոցներ ձեռնարկել: Նաեւ պետք է, որ աղետի կամ դրա առաջացման վտանգի դեպքում բոլորը ճիշտ քայլեր ձեռնարկեն: Եվ ձեռնարկություններում, աշխատողների կյանքը պահպանելու համար, պետք է միջոցներ ձեռնարկվեն:

Բացի այդպիսի օգնությունից, կարեւոր է չմոռանալ ծերերին ու հաշմանդամներին ցուցաբերվող օգնության մասին:

«Սեփական շրջանը սեփական ուժերով պաշտպանելու համար» տեղի բնակչության համար կարեւոր է շրջանի խնդիրները լուծել՝ համագործակցելով ինչպես աղետների ժամանակ, այնպես էլ առօրյա կյանքում:

Բացի այդ, կարեւոր է բնակչության, տեղական ձեռնարկությունների, կամավորների, մասնագետների ու վարչարարների համատեղ աշխատանքը:

Պետությունն ու տեղական վարչական մարմինները պատասխանատու են անվտանգության կանոնների մշակման համար, որպեսզի պաշտպանեն բնակչության կյանքն ու ունեցվածքը: Միաժամանակ նրանք պետք է աջակցեն բնակչության՝ ինքնօգնության եւ համատեղ գործելու ջանքերին:

Աղետների հետեւանքների նվազեցման եւ արագ վերականգնման համար կարեւոր է «ինքնօգնության», «փոխօգնության» եւ «հասարակական օգնության» փոխներգործումը:

2. Չի կարելի մտածել, որ մեզ հետ ոչինչ չի պատահի, պետք է կարողանալ պատկերացնել աղետը:

Հանսին-Ավաձիի երկրաշարժից տուժած շրջանում «աղետ» բառն ասելիս մարդիկ պատկերացնում էին ջրհեղեղ կամ թայֆուն: Այդ պատճառով էլ ոչ միայն բնակչությունն, այլեւ վարչական մարմինները մտածում էին, որ «Կանսայի շրջանում երկրաշարժ

չի լինի»: Բայց տեղի ունեցավ Հանսին-Ավաձիի երկրաշարժը, որը լուրջ հետեւանքներ ունեցավ:

Ճապոնիային մինչ այժմ մեծ վնաս են հասցրել հետեւյալ աղետները. երկրաշարժ, ցունամի, հրաբուխների ժայթքում, փոթորիկ, հեղեղ, ուժեղ ձնահյուսեր, ջրհեղեղ, ծովի մակարդակի բարձրացում, սողանքներ, փլուզումներ եւ այլն:

Ապագայում եւս աղետների առաջացման վտանգ կա: Հայտնի չէ, թե աղետը երբ եւ որտեղ կպատահի:

Երբ տարերային աղետ է տեղի ունենում, մարդիկ մտածում են, որ «աղետը սարսափելի բան է», «պետք է մի բան ձեռնարկել», բայց ժամանակն անցնում է, եւ այդ զգացմունքները մոռացվում են: Եթե մտածենք, թե «մեզ հետ ոչինչ չի պատահի», «մեզ մոտ վտանգներ չկան», ապա վնասն էլ աղետի դեպքում մեծ կլինի: Այն, ինչ մենք չենք կարողանա անել սովորական պայմաններում, առավել եւս չի ստացվի արտակարգ պայմաններում: Այդ պատճառով էլ բոլորի համար կարեւոր է միշտ մտածել, թե ինչ կլինի իմ, իմ ընտանիքի ու երեխաների հետ, եթե աղետ տեղի ունենա: Ու նաեւ մտորել աղետների վտանգի նվազեցման ու կանխարգելման միջոցների մասին ու գործել դրանց համաձայն:

3. Շատ կարեւոր է սերունդներին՝ նախկին աղետներից քաղած դասերը փոխանցելիս, կիրառել դրանք աղետների նվազեցման ուղղությամբ տարբեր միջոցառումների համար

Սերունդներին Հանսին-Ավաձիի երկրաշարժից քաղած դասերի ու փորձի փոխանցման նպատակով, երկրում եւ արտասահմանում աղետների հասցրած վնասի նվազեցման, ինչպես նաեւ կյանքի հանդեպ հարգանքի եւ համակեցության կարեւորության գաղափարի տարածման համար, մենք ստեղծել ենք «Հիտո տո բոսաի միրաի» կենտրոնը:

Մեր երկրում աշխարհագրական տեղակայման պատճառով հաճախ են տարերային աղետներ լինում, նախորդ աղետների պատմությունից էլ պարզ է, որ խոշոր բնական աղետի առաջացման հավանականություն կա, որը մեծ վնաս կհասցնի ավելի ընդգրկուն տարածքներում:

Հանսին-Ավաձիի երկրաշարժը մեզ շատ բան է սովորեցրել: Սակայն, չպետք է մոռանալ, որ սա երկրաշարժի միայն մի օրինակ է:

Այդ պատճառով էլ կարեւոր է սերունդներին աղետներից քաղած դասեր փոխանցել, սկսած Հանսին-Ավաձիի երկրաշարժից մինչեւ այսօրվա աղետները՝ վնասները նվազեցնելու համար, եւ որ յուրաքանչյուրը հստակ պատկերացում ունենա իր անելիքի մասին:

Շարունակելի

Արտակարգ բժիշկը

Երբ Երեւանի բնակիչ Արտավազդ Անտոնյանին փետրվարի 9-ին բերեցին Մխիթար Հերացու անվան Երեւանի պետական բժշկական համալսարանի համալսարանական 1-ին հիվանդանոցի պլաստիկ վիրաբուժության կլինիկա, նա չէր էլ սպասում, որ ամեն ինչ լավ կվերջանա. քար ջարդող մեքենայով աշխատելիս ձեռքն էր պոկվել՝ ամբողջությամբ:

- Ինձ թվում էր, որ վերջ, առանց ձեռքի եմ մնալու, չէի պատկերացնում, որ կարող եմ վերականգնել թեւս - ասում է նա:

Արտավազդ Անտոնյանին վիրահատել է վիրաբույժ Արտավազդ Սահակյանը: 10 ժամ տեւած վիրահատության ժամանակ վերականգնվել է հիվանդի ձեռքը, իրար են միացվել բոլոր պոկված անոթները, մկանները, ոսկորները, նյարդերը, մի խոսքով՝ ամեն ինչ: Այս բարդ վիրահատությունը սակայն միկրովիրաբույժ Արտավազդ Սահակյանի համար առաջինը չէր: 1980-ականներից մինչ օրս նա նմանատիպ մոտ 100 վիրահատություն է իրականացրել: Տարիների փորձն ապացուցել է, որ անդամահատված վերջույթը հաջողությամբ վերականգնելու համար կարեւորը տուժածին ժամանակին տեղ հասցնելն է, ու որքան շուտ՝ այնքան լավ:

- Մենք սահմանափակված ենք ժամանակի առումով, 6-7 ժամ հետո վերջույթը կոցնելը խիստ վտանգավոր է օրգանիզմի համար, որովհետեւ թթվածնային քաղցի պատճառով ամորուացված հատվածը սկսում է մեռուկանալ, - բացատրում է բժիշկը,- *իսկ արյան շրջառությունը վերականգնելուց հետո առաջացած դիակային նյութերն ու թույներն անցնում են արյան մեջ, ինչը հետագայում բերում է երիկամների, լյարդի ֆունկցիաների խանգարման:*

Կարեւոր է նաեւ տուժածին ճիշտ հիվանդանոց տանելը: Պոկված վերջույթի վերականգնում Հայաստանում կատարվում է հիմնականում համալսարանական 1-ին հիվանդանոցում ու՝ վիրաբույժ Արտավազդ Սահակյանի մասնակցությամբ: Հայաստանի պատմության մեջ եւ բժշկի կյանքում առաջին նմանատիպ վիրահատությունը 1982 թվականի մարտի 14-ին է եղել, երբ հիվանդի ոտքի մատը տեղափոխեցին ձեռքի վրա: Ճիշտ է, դա Արտավազդ Սահակյանի կատարած բարդագույն վիրահատությունը չէ, բայց նրա համար ամենատպավորիչն է:

Արտավազդ Սահակյանը ՀՀ-ում պլաստիկ վիրաբուժության եւ միկրովիրաբուժության հիմնադիրներից է: Վերապատրաստվել է Ռուսաստանի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Շվեյցարիայի եւ ԱՄՆ-ի պլաստիկ վիրաբուժության եւ միկրովիրաբուժության կլինիկաներում: Արցախյան պատերազմի տարիներին աշխատել է Ստեփանակերտի կենտրոնական զինվորական կլինիկական հոսպիտալում, ղեկավարել վերջույթների եւ դեմքի ծանր վնասվածքներով հիվանդների բուժման աշխատանքները:

- Պատերազմի ժամանակ, հիշում եմ, մի օր մի 16-17 տարեկան տղայի էինք վիրահատում: Նա սկզբում անունը չէր ասում, չէի հասկանում, թե ինչու, - պատմում է Արտավազդ Սահակյանը, - *ու երբ շնչափողից արկի մի մեծ բեկոր հանեցինք ու փրկեցինք նրան, գրեց իր անունն էլ, ազգանունն էլ, ասաց՝ ով է: Ես հարցրեցի. «Ինչու՞ սկզբում չէիր ասում անունդ», պատասխանեց. «Որովհետեւ, եթե մեռնեի, չէի ուզում, որ մամաս իմանար»:*

Վերջին շրջանում Արտավազդ Սահակյանը համագործակցում է նաեւ ուռուցքաբանների հետ՝ քաղցկեղից քայքայված դեմքեր է վերականգնում: Սա նույնպես բարդագույն վիրահատությունների շարքին է դասվում:

- Այս տիպի վիրահատությունները բարդ տրանսպլանտացիաներն են: Չկա բերանի խոռոչը, ծնոտը, դու պարտավոր ես վերականգնել շարժուն որեւէ օրգան, որը կունենա եւ ոսկրային հենք, եւ պաշտպանված կլինի ներսից, վերք չի լինի եւ այլն:

Այս ամիս 2-3 նման վիրահատություն ենք կատարել, բայց բարդագույնը սեղտեմբերին էր. մարդու մեջ ամեն ինչ ամբողջովին քայքայված էր՝ ծնոտը, քիթը, բերանը՝ նա պիտի մահանար: Բայց վերականգնեցինք ամեն ինչ, ու նա հիմա առում է, - պատմում է միկրովիրաբույժը:

Նմանատիպ վիրահատություններ կատարվում են նաեւ կրծքագեղձի քաղցկեղի դեպքում, երբ բուժումը հետապնդում է երկու նպատակ՝ բացառել վերին վերջույթի այտուցը, ինչպես նաեւ՝ վերականգնել կնոջ կուրծքը:

Այսօր ԱՄՆ-ում եւ Ֆրանսիայում վերջույթներ են պատվաստում նաեւ այն հիվանդներին, ովքեր տարիներ ի վեր զրկված են եղել դրանցից: Նման դեպքերում բնականաբար, ավելացող վերջույթը հիվանդինը չէ, այլ՝ դոնորային է, այլ կերպ ասած՝ դիակային: Վիրաբույժ Արտավազդ Սահակյանն ասում է, որ այսպիսի վիրահատություն իրենք էլ կարող են անել, եթե մեզ մոտ իմունային համապատասխանությունը որոշելու համար համապատասխան լաբորատորիաներ լինեն: Բայց նմանատիպ պատվաստումների բժիշկն այնքան էլ կողմնակից չէ, որովհետեւ դրանցից հետո մարդը մեկընդմիտ զրկվում է առողջությունից:

- Այստեղ մի փիչ սկզբունքային խնդիր կա. որոշ գիտնականներ կարծում են, որ մարդ ավելի լավ է չունենա երկու ձեռք, պրոտեզներ կրի, բայց լինի առողջ մարդ, որովհետեւ դիակային ձեռքեր պատվաստելուց հետո ամբողջ կյանքում հիվանդը պիտի իմունոդեպրեսանտներ օգտագործի, ինչը բավական խոցելի է դարձնում մարդուն տարբեր տեսակի վարակների նկատմամբ, - բացատրում է բժիշկը:

Իսկ Արտավազդ Անտոնյանին շուտով դուրս կգրեն հիվանդանոցից: Իր հետ տեղի ունեցած դժբախտ դեպքի մասին չի ուզում պատմել, թեեւ ամեն ինչ հիշում է. ամբողջ ընթացքում գիտակցությունը տեղն է եղել: Նրա միակ ցանկությունն է, որ ձեռքը շուտ սկսի նորից աշխատել:

Անի Ստեփանյան

Հիշողություն

Հիշողությունը բարդ հոգեկան մի գործընթաց է, որի միջոցով ուղեղը պահում եւ վերարտադրում է ինֆորմացիան: Բոլոր մարդիկ ծնվում են հիշելու կարողությամբ, սակայն շատ քչերն են, որ ֆենոմենալ հիշողություն ունեն, ովքեր հիշում են մեծ քանակությամբ ինֆորմացիա եւ այն վերարտադրում շատ մեծ արագությամբ, գրեթե ոչինչ չեն մոռանում: Այս ամենը կարող է լինել ժառանգականության կամ մարզումների հետեւանք:

Փոքր երեխաների հիշողության ծավալը փոքր է, այդ իսկ պատճառով մենք հազվադեպ ենք հիշում, թե մեզ հետ ինչ է պատահել փոքր տարիքում: Տարիքի հետ մարդն ավելի ու ավելի շատ ինֆորմացիա է կարողանում հիշել ու վերարտադրել: Կա տեսակետ, որ տարիքի հետ մարդու հիշողությունը վատանում է, իհարկե, այստեղ կա ճշմարտություն, սակայն այս ամենն ավելի շատ կախված է մարդու անհատական առանձնահատկություններից: Փաստ է, որ այն մարդիկ, ովքեր գիտությամբ են զբաղվում, մեծ տարիքում բավական լավ հիշողություն են ունենում: Մարդու հիշողությունը ոչ միայն պահում ու վերարտադրում է ինֆորմացիան, այլեւ ունի ավելորդ ինֆորմացիան մոռանալու հատկություն: Հիշելու եւ մոռանալու պրոցեսը դուրս է մեր վերահսկողությունից:

Գրեթե բոլորիս հետ էլ պատահել է, որ մոռացել ենք որեւէ մարդու անուն, կամ մոռացել ենք, թե որտեղ ենք դրել որեւէ իր: Այդ ժամանակ մեր տրամադրությունն ընկնում է, եւ մենք ջանքեր ենք գործադրում հնարավորինս շուտ հիշել մոռացվածը: Հիշողության թերացումները կարող են պայմանավորված լինել լարվածությամբ, սթրեսներով: Մարդու հիշողությունը հնարավոր է լավացնել ցանկացած տարիքում, հարկավոր է միայն որոշ միջոցներ իմանալ:

Եղեք ուշադիր

Երբ դուք ինչ-որ բան ցրված եք անում՝ կարդում եք, հեռուստացույց եք դիտում եւ այլն, այդ ժամանակ կդժվարանաք ինչ-որ բան հիշել: Ուստի որեւէ գործողություն անելիս, սկզբում կենտրոնացրեք ձեր ուշադրությունը, հետո բարձրաձայն նկարագրեք ձեր տեսածը, ձեր գործողությունները: Երբ ինֆորմացիան ֆիքսվում է մեր ուղեղում ոչ միայն տեսողության, այլեւ խոսքի միջոցով, ապա ավելի հստակ տեղ է զբաղեցնում մեր գլխուղեղում, ուստի այն մոռանալու հավանականությունը փոքրանում է:

Մի շեղվեք

Ինչ-որ գործողություն անելիս փորձեք չշեղվել, օր.՝ գնում եք խոհանոց ջուր խմելու, սակայն այնտեղ հասնելուց անմիջապես հետո մոռանում եք, թե ինչի համար եք եկել: Որպեսզի նման դեպքեր չլինեն, կարելի է մտքում կրկնել, թե ինչի համար եք գնում խոհանոց՝ «Ես գնում եմ խոհանոց ջուր խմելու», եւ խոհանոցում ձեզ հանդիպող որեւէ բան դժվար թե շեղի ձեր ուշադրությունը:

Ստեղծեք տրամաբանական կապեր (զուգորդումներ)

Որպեսզի կարողանաք հիշել նոր ինֆորմացիան, տրամաբանական կապեր ստեղծեք այդ նոր ինֆորմացիայի եւ ձեզ արդեն հայտնի, լավ հիշվող երեւույթի միջեւ:

Օր.՝ եթե ուզում եք հիշել որեւէ մեկի հեռախոսահամարը, ապա այդ համարի թվերը կապեք այլ երեւույթների հետ՝ ձեր կամ ուրիշի տարիքի, ծննդյան թվի կամ այլ թվերի հետ: Օր.՝ որպեսզի հիշեք որեւէ փողոցի անուն կամ՝ թե ինչ պիտի գնեք խանութից, լավ կլինի, որ հորինեք մի արտահայտություն, որտեղ կօգտագործվեն այդ անունները:

Պատկերավոր մտածեք

Պատկերավոր մտածողությունն օգնում է հիշել նոր անուններն ու դեմքերը: Այսինքն, նոր անունը լսելիս այն նմանեցրեք որեւէ իրի կամ պատկերի, դա ձեզ կօգնի հիշել տվյալ մարդու անունը:

Մի քիչ սպասեք

Եթե չեք կարողանում հիշել ձեր զրուցակցի անունը, ապա ավելի լավ է չֆիքսվեք այդ մտքի վրա եւ հանգիստ շարունակեք զրույցը: Երբ դուք ճնշում չեք գործադրում հիշողության վրա, ապա անհրաժեշտ ինֆորմացիան ավելի արագ կհայտնվի:

Մարզեք ձեր հիշողությունը

Գեղեցիկ շրջանակի մեջ դրեք մի բանաստեղծություն եւ այն տեղադրեք հարմար վայրում: Ձեր նպատակն է անգիր անել այդ բանաստեղծությունը կարճ ժամանակահատվածում: Սկզբում սկսեք սովորել փոքրիկ բանաստեղծություններ, օր.՝ քառատողեր, եւ աստիճանաբար մեծացրեք ծավալը: Այս միջոցով դուք մարզում եք ձեր հիշողությունը, եւ այն դառնում է ավելի ճկուն:

Մի փորձեք անել ամեն ինչ

Մարդիկ հաճախ միաժամանակ մտածում են բազմաթիվ հարցերի շուրջ: Փորձեք հանգստանալ եւ որոշ գործեր հանձնեք ձեզ շրջապատող մարդկանց: Այդ ժամանակ դուք կսկսեք մտածել միայն հիմնական բաների մասին եւ ուղեղը չեք ծանրաբեռնի ոչ անհրաժեշտ ինֆորմացիայով:

Այն, ինչ հաճախակի եք կորցնում, միշտ միեւնույն տեղում դրեք:

Երբ է անհրաժեշտ դիմել բժիշկի

Չկա որեւէ մեթոդ, որի օգնությամբ մարդը կկարողանա ինքնուրույն որոշել իր հիշողության խանգարումները: Շատ կարեւոր է, որ դուք կարողանաք տարանջատել լուրջ խանգարումները սովորական մոռացկոտությունից, որը կարող է պայմանավորված լինել սթրեսով, դեպրեսիայով եւ այլ ապրումներով: Եթե կարծում եք, որ սովորական մոռացկոտություն է, ապա այն հնարավոր է վերականգնել վերը նշված մեթոդների միջոցով: Երբ նկատում եք, որ սկսել եք մոռանալ ամենապարզ երեւույթները, ձեզ ծանոթ ճանապարհը, ծանոթ մարդկանց, նկատում եք, որ մոռանում եք ավելի հաճախակի, ապա այս դեպքերում ցանկալի է դիմել բժշկի:

Կան մի շարք երեւույթներ, որոնց բացասական են ազդում հիշողության վրա, օր.՝ ծխախոտի եւ խմիչքի չարաշահումը: Օրգանական նյութերի պակասությունը օրգանիզմում հանգեցնում է հիշողության թուլացմանը: Կերեք շատ մրգեր եւ բանջարեղեն, որոնք պարունակում են հիշողության համար անհրաժեշտ բոլոր նյութերը: Ուսումնասիրությունները վկայում են, որ ֆիզիկական վարժությունները շատ դրական են ազդում հիշողության վրա, քանի որ դրանց շնորհիվ արագանում է արյան շրջանառությունը եւ արագացնում թթվածնի ու գլյուկոզայի մատակարարումը գլխուղեղ:

Հիշեք, որ ամենից շատ տանջվում են հենց մոռացողները, այդ իսկ պատճառով շատ խիստ մի վերաբերվեք նրանց: Օգնեք նրանց մարզել իրենց հիշողությունը, որպեսզի ոչ իրենք տանջվեն, ոչ էլ ձեզ տանջեն:

Աննա Կարապետյան
հոգեբան-խորհրդատու

Ձեր հարցերը հոգեբանին կարող եք ուղարկել hogeban@emergency.am էլ. հասցեով:

Ֆիզկուլտուրան փրկում է տագնապից

Եթե պատասխանատու հարցազրույցից, քննությունից կամ ապագա աներոջ հետ առաջին հանդիպումից առաջ դուք դողում եք ու ձեր տեղը չեք գտնում, պետք չէ վալերիանի կաթիլներ կուլ տալ: Ավելի լավ է 30 հատ կքանիստ արեք եւ պառկած ձգումներ, ասում են մասնագետները:

Պարբերական ֆիզիկական վարժությունները կարող են զգալիորեն նվազեցնել տագնապայնության աստիճանը, որը հաճախ շատ քրոնիկական հիվանդությունների մշտական ուղեկիցն է եւ մարդուն թերեւս ավելի շատ է տանջում, քան ֆիզիկական ցավը: Նման հետեւությունների են հանգել ԱՄՆ Ջորջիայի նահանգի համալսարանի կինեզիոլոգիայի ամբիոնի մասնագետները:

Կինեզիոլոգիա

Համեմատաբար նոր ուղղություն է (40 տարուց պակաս), որը ելնում է մարդկային օրգանիզմի ինքնակարգավորման սկզբունքից: Կինեզիոլոգիայի հիմնական լոզունգն է՝ մարմինն ավելի լավ գիտի, թե ինչ է իրեն պետք տվյալ պահին:

Տագնապի ախտանշանները

- Հաճախասրտություն
- Դող, ձեռքերի ու ոտքերի թուլություն
- Քրտնարտադրություն, սառն ափեր
- Շնչառության դժվարացում
- Փորի ներքեւի հատվածում սեղմման զգացողություն
- Ստամոքսաղիքային տրակտի աշխատանքի խանգարում
- Արյան ուժեղ հոսք դեմքի շրջանում
- «Սագամաշկ»

Հետազոտության ընթացքում բժիշկները հնարավորություն են ստացել վերլուծելու տարբեր հիվանդություններով տառապող 2914 մարդկանց փորձը: Նրանց միավորում էր այն, որ բոլորն էլ դեպրեսիայի ու տագնապի ախտանիշներ ունեին: Գիտնականները հայտնաբերել են, որ իրենց ֆիզիկական ակտիվությամբ օրական առնվազն 30 րոպե ծանրաբեռնող հիվանդների տագնապայնությունը 20 %-ով նվազում է:

- Մեր հետեւությունները եզակի չեն, բայց դրանք լրացնում են այն տեսությունը, որ ֆիզիկական ակտիվությունը, օրինակ՝ քայլքը կամ ծանրությունների բարձրացումը, կարող են լավագույն դեղամիջոցը լինել՝ քրոնիկական հիվանդություններին ուղեկցող հոգեբանական հավասարակշռության խախտումների ժամանակ: Մենք կարող ենք պարզագույն մեթոդներով օգնել հիվանդներին ազատվել տագնապներից ու դեպրեսիայից, - ասում է աշխատանքների ղեկավար, դոկտոր Մեթյու Հերինգը:

Հերինգը պատմել է նաեւ, որ ներկա պահին լավ ուսումնասիրված է ֆիզիկական ծանրաբեռնվածության դերը դեպրեսիվ վիճակների թեթեւացման գործում: Մինչ այս տագնապայնությանն այնքան էլ մեծ ուշադրություն չէր դարձվում հետազոտողների կողմից:

արտակարգ ժամանց

Կենդանիներն ու արտակարգ իրավիճակները

Թռչնային զայրույթ

Պապարացիներին չեն սիրում նույնիսկ թռչունները: Անցյալ տարվա դեկտեմբերին Ղազախստանում անցկացվում էր «Սոնար-2009» որսաթռչունների ամենամյա հանրապետական մրցույթը: Այս երկրում դեռեւս պահպանում են որսաթռչունների օգնությամբ որս անելու հին սովորույթը: Մրցումները կազմակերպվում են վաղ ձմռանը, երբ առաջին ձյունը ծածկում է բարձր լեռների լանջերը:

Այս անգամ Չենգելսու ձորում անցկացվող մրցույթին մասնակցում էր 39 քարարծիվ եւ 9 բազե, բնականաբար՝ ոչ թե միայնակ, այլ իրենց որսորդ տերերի հետ: Չնայած թռչունները լավ վարժեցված են, պետք չէ մոռանալ, որ նրանք վայրի են ու գիշատիչ:

«Սոնար-2009» փառատոնը չի անցնում առանց արտակարգ պատահարի: Քարարծիվներից մեկը, օդ բարձրանալուց հետո, որպես որսի թիրախ ընտրված նապաստակին հետապնդելու փոխարեն կտրուկ պտույտ է կատարում ու հարձակվում մրցույթները լուսաբանելու համար ձորում հավաքված լուսանկարիչների ու լրագրողների խմբի վրա: Բարեբախտաբար, քարարծիվը չի հասցնում լրջորեն վնասել լուսանկարչին: Վերջինս գլուխը պրծացնում է միայն թեթեւ վախով ու պատռված կաշվե բաճկոնով: Քարարծվի տերը կարողանում է թռչունին, հարձակումից հետո, վերադարձնել իր մոտ:

Բռնվի՛ր ձկնիկ՝ մեծ կամ փոքր

2009 թ. ամռանը Հունգարիայում մի ձկնորս քիչ էր մնում զոհ գնար երկումետրանոց հսկա լոքոյին:

Ավստրիացի ձկնորսն իր հանգիստն անցկացնում էր Հունգարիայի գեղատեսիլ լճերից մեկի ափին՝ վայելելով ձկնորսության հաճույքը: Տեսնելով, որ հարեւանությամբ գտնվող երկու ձկնորսները խոշոր ձուկ են բռնել ու ոչ մի կերպ չեն կարողանում որսը ջրից հանել եւ գցել նավակի մեջ, ավստրիացին որոշում է օգնության ձեռք մեկնել առավել հաջողակ ընկերներին: Տղամարդը նետվում է ջուրն ու սուզվում մոտ երեք մետր խորության վրա, որպեսզի կարթից պոկի ձկանն ու ջրից դուրս հանի: Սակայն դեմ առ դեմ հանդիպելով հսկա լոքոյին՝ 36-ամյա տղամարդն ինքն է ստիպված լինում պաշտպանվել ձկան հարձակումներից: Լոքոն հասցնում է կծել ձկնորսի ազդրը, այնուհետեւ պոկում կարթի թելն ու փախչում:

Ձկնորսներն այս պատմությունն ամեն անգամ պատմելիս ձկան երկարությունը մի-մի մետրով ավելացնում են…



Սեփական պոչը

Արքայական վագրանախշ վիշապօձը քաղցից հարձակվում է… սեփական պոչի վրա: Ընդորում՝ կծել-կուլ տալուց հետո սողունի ծնոտը դուրս է ընկնում այնպես, որ նա այլեւս չի կարողանում ինքնուրույն ազատել պոչը: Նրա տերը դիմում է անասնաբույժ Բոբ Ռեյնոլդսի օգնությանը: Վերջինս զոնդի միջոցով կարողանում է ավելի լայն բացել վիշապօձի ծնոտներն ու ազատագրել պոչը… Բարեբախտաբար, տերը շուտ էր դիմել բժշկին, քանի դեռ սողունի ստամոքսահյութը չէր սկսել քայքայել իր իսկ պոչը:

Իններորդ հարկում

Բոլորովին վերջերս ռուս փրկարարներն օգնության են հասել Չելյաբինսկի մարզի Սնեժինսկ քաղաքի բարձրահարկ շենքերից մեկի աստիճանավանդակում հայտնված մի… կովի: Մինչ օրս առեղծված է մնում, թե ինչպես էր խոշոր կենդանին հայտնվել բազմահարկ էլիտար շենքի իններորդ հարկում՝ չիմանալով շքամուտքի դուռը բացող էլեկտրոնային կողպեքի ծածկագիրը: Անհայտ են նաեւ այն հանգամանքները, որոնք ստիպել էին խոշոր եղջերավորին բարձրանալ իններորդ հարկ:

Խեղճ կենդանին իր անհարմար վիճակը գիտակցել էր միայն այն ժամանակ, երբ խցանվել-մնացել էր աստիճանավանդակի ճաղերի ու նեղլիկ պատի արանքում: Սարսափահար կովը սկսել էր բարձրաձայն բառաչել ու լեղաճաք էր արել շենքի բնակիչներին: Երբ վերջիններս ահազանգում են փրկարար ծառայություն, այնտեղ կարծում են, թե դա հերթական չար կատակն է եւ արձագանքում են միայն երրորդ ահազանգից հետո…

Շատ բան տեսած փրկարարները ստիպված են լինում շփոթահար կենդանուն ներքեւ քաշել՝ ձգելով վզին կապած պարանի կտորից: Փրկարարական աշխատանքները տեւում են ավելի քան երկու ժամ: Վերջում դեպքի վայր է հասնում նաեւ կովի տիրուհին, որը փրկարարներից ու շենքի բնակիչներից պակաս զարմացած չէր: Նրա խոսքերով՝ ինքը Մարթային (պարզվում է՝ այդպես էր կովի անունը) թողել էր մոտակա մարգագետնում արածելու ու, երեկոյան կենդանուն այնտեղ չգտնելով, կարծել էր, թե նրան գողացել են:

Ինքն իր ոտքով

Այս տարվա փետրվարին շոտլանդացի փրկարարներին զարմացնում է մի կատու: Գլխին մետաղե բանկա ունեցող կատուն ինքն իր ոտքով գալիս է «Կենդանիների հետ դաժան վերաբերմունքի դեմ պայքարի միության» գրասենյակ: Կենտրոնի աշխատակիցներն այդպես էլ չեն կարողանում հասկանալ, թե ինչպես էր կենդանին փակված աչքերով «գտել» ճիշտ ճանապարհն ու վրաերթի չէր ենթարկվել: - Ամենայն հավանականությամբ՝ կատուն պատահաբար գլուխը մտցրել էր աղբանոցում գտած կատվի կերի դատարկ բանկայի մեջ ու չէր կարողացել ինքնուրույն հանել գլուխը, - ենթադրում է Շոտլանդիայի վայրի բնության փրկարարական կենտրոնի տնօրեն Քոլին Սեթդոնը:

Գրասենյակի աշխատակիցները բարեհաջող կերպով ազատում են կատվի գլուխը մետաղե տարայից եւ նրան տեղափոխում էդինբուրգում գտնվող անտուն կենդանիների խնամքի կենտրոն: Նա որեւէ վնասվածք չէր ստացել ու, փրկիչների խոսքերով՝ ուրախ էր, որ ազատվել է այդ յուրօրինակ թակարդից: Կատվի տերերին առայժմ չի հաջողվել գտնել, չնայած նրա պարանոցին գեղեցիկ վզնոց կա:

§²ñï³Ï³ñ·Ã»ñÃ¦
ß³µ³Ã³Ã»ñÃÇ
ÑÇÙÝ³¹Çñ»ñ Ññ³ï³ñ³ÏÇã
§²ñï³Ï³ñ·³ÉÇù¦
Éñ³ïí³Ï³Ý Ï»ÝïñáÝ êäÀ

îÝûñ»Ý՝
ÜáõÝ» ¶ñÇ·áñÙ³Ý
¶ÉËª³íáñ ËÙµ³·Çñ՝
ÜÇÏáÉ³Ù ¶ñÇ·áñÙ³Ý

ÊÙµ³·ñÇ ï»Õ³Ï³É՝
²í³·º÷ñ»ÙÙ³Ý
Ò»ñ³íáñáÕ՝
Ì³ñ¹³Ý ¶³ëå³ñÙ³Ý

º ñ»ñ³Ý, äáõßÏÇÝÇ 25
Ð»é. 56 76 56, 24 24 22
E - mail: tert@emergency.am

îåª³·ñí³Í ¿ §îÇ·ñ³Ý Ø»Í¦ ÑÑñ³ï³ñ³ÏãáõÃÙ³Ý
ïå³ñ³ÝáõÙ՝ ²ñß³ÏáõÝÙ³ó 2
Ì³í³ÉÁ՝ 2 ïå³·ñ³Ï³Ý Ù³ÙáõÉ
ä³ï»ñ՝435, ·ñ³ÝóÙ³Ý í Ï³ù³Ï³Ý՝1074,
ïå³ù³Ý³ÏÁ՝ 5000 ûñÇÝ³Ï:
Ստորագրված է տպագրության
11.3.2010 թ.